

## ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏԺՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Չինաստանի կառավարությունը պատժամիջոցներ հաստատեց երկու ամերիկեան ընկերություններու դեմ՝ Թայուանի գէնք վաճառելու պատճառով: «Լոքիտ Մարթին» եւ «Նորթրոփ Կրաման» ընկերությունները պիտի ենթարկուին պատժամիջոցներու:



## ՖՐԱՆՑԻԷ ԿԸ ՄԱՅՅ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆ

Քաղաքական վերլուծողներ կը յայտարարեն, թէ նախագահական թեկնածու Սըլէյման Ֆրանսիէ տակաւին կը մնայ հիմնական թեկնածուն: Ֆրանսացիներ Ֆրանսիէն



տարբեր թեկնածու չառաջարկեցին, իսկ անոր սատարողները տակաւին կը մնան իրենց կեցուածքին վրայ: Անոր սատարողներ կը հաւատան, որ սեուտական-իրանեան յարաբերութեան մէջ որեւէ յառաջիկայացք դրական դեր պիտի ունենայ անոր ընտրութեան մէջ:

## ԱՐԺՈՅԹԻ ԳԻՄՆԱԳՐԱՄԻՆ ՊԱՅՄԱՆՔ

Արժոյթի միջազգային հիմնադրամին պատուիրակուիւնը, որ այցելեց Լիբանան, դրականօրէն արձագանգեց Կեդրոնական դրամատան առած քայլերուն: Պատուիրա-



կուիւնը պահանջեց արագ քայլեր առնել սանձելու համար տնտեսական քառուց երկրին մէջ: Հակառակ պարագային, ան զգուշացուց ապագայի վնասէն, որ պիտի հասնի տնտեսութեան:

## ԵՐԿՈՒ ԶՕՐԱՆՈՑԻ ԲԱՅՈՒՄ

Լիբանանեան բանակի ընդհանուր հրամանատար Ժոզէֆ Աուն Պեքայի շրջանին մէջ հիմնաքարը դրաւ երկու



զօրանոցներու: Զօրանոցները պիտի գտնուի Զահլէի դաշտային եւ Լեռնային շրջաններուն մէջ:

## ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՏՊԱՆԸ ԿԱԼՆԵՔԻ ՏԱԿ

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն յայտարարեց, թէ Նիժերի մէջ Ֆրանսայի դեսպանը կը գտնուի կալանքի



տակ զինուորական իշխանութեան կողմէ: Ան ասելոց, որ դեսպանատան բոլոր պաշտօնեաները կը գտնուին կալանքի տակ, դեսպանատան մէջ: Անոնք կը ստանան զինուորական ճաշ միայն:

## ՏԱՍԵՎԵՑ ԹՈՆ ԳՐԹԻՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՆԻՉ

Իսրայելեան իշխանութիւնները յայտարարեցին, թէ բռնագրաւած են Թուրքիայէն Կազա ուղարկուած տասնվեց թոն հրթիռ արտադրելու հում նիւթ: Նիւթը բռնագրաւուած է Թուրքիայէն Կազա ուղղուող նաւու մը վրայ:

## ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԵՐԿՓԵՂԿՈՒԻԼ

Բրիտանական «Ինտիփենտընթ» օրաթերթը յայտարարեց, թէ Երոպական միութիւնը կրնայ ենթարկուիլ երկփեղկումի, երբ Ուքրանիոյ օժանդակութեան յաւելումի



հարցը սեղանի վրայ դրուի: Օրաթերթը ասելոց, որ Երոպական միութիւնը կը վարէր զգուշաւոր քաղաքականութիւն արեւելեան Երոպայի երկիրները իրեն միացնելու քաղաքականութեան մէջ: Նոյնն է պարագան ներկայիս, մանաւանդ Ուքրանիոյ պարագային:

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾԱՆՐ ԿԻՃԱԿ

Մարդասիրական ծանր վիճակ կը տիրէ Լիպիոյ ծովեզերեայ Տըրնա քաղաքին շուրջ եւ 38.640 մարդ հեռացած



է քաղաքէն: «Տանիէլ» փոթորիկը պատճառեց մօտ հինգ հազար զոհ եւ հազարաւոր մարդիկ կը մնան կորուսած: Արեւելեան Լիպիոյ Սուսա քաղաքը յայտարարուեցաւ աղէտի գօտի:

## ԿԱԿՆԸՐ ԱՅԱԲԵԿՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Բրիտանիոյ Ներքին գործերու նախարարութիւնը ռուսական «Վակնըր» վարձկանական կազմակերպութիւնը



զետեղեց ահաբեկչական կազմակերպութիւններու ցանկին վրայ: «Վակնըր» կազմակերպութիւնը, ըստ այս որոշումին, ահաբեկչական կազմակերպութիւն է, որուն անդամակցիլը կամ օժանդակելը արգիլուած է:

## ՌՈՒՍԻՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Ռուսական դաշնութեան Կեդրոնական դրամատունը որոշեց ռուպլիով պարտքի տոկոսը բարձրացնել 13 առ



իարիւրի: Պատճառը սղաճի զսպումը եւ ռուպլիի փոխարժեքի անկումի զսպումն է:

## ԵՄԵՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՄԵՋ

Եմենական պատերազմի ընթացքին մը հասաւ Սեուտական Արաբիա՝ բանակցելու համար երկու երկիրներուն միջեւ քաղաքական լուծում գտնելու համար:

## ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԻՍԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ատրպէյճանի պատասխանատուներ սկսած են բացառապէս Լաչինի միջանցքին վրայ անցակէտ հաստատելու



իրենց իսկական նպատակը: Ատրպէյճանի ընդհանուր դատախազ Քեմրան Ալիեւ յայտարարեց, թէ այս միջանցքի անցակէտին վրայ փնտռուող չորս հարիւր անձեր ձերբակալուած են: Ուրեմն, Ատրպէյճանի իսկական նպատակը փնտռուած անձերու եւ Արցախի անցանկալի հայ բնակիչներու ձերբակալութիւնն է:

## ԵՐՏՈՂԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան յայտարարեց, թէ Թուրքիա կը լուծէ իր առջեւ ցցուող բոլոր տնտեսական խնդիրները: Ան ասելոց, որ նոյնիսկ Թուրքիոյ



ամենաոխտերիմ թշնամիները չեն կրնար անտեսել զայն: Չեն կրնար մուտք ամպեր բերել Թուրքիոյ տնտեսութեան վրայ: Ան առաջարկած է բոլոր արտերկրի թրջական ծագում ունեցող ութ միլիոն քաղաքացիները ընդգրկել մէկ խմբաւորումի մէջ: Հիւսիսային Կիպրոսի, արեւմտեան Թրակիոյ, Պալեստինոյ եւ Կովկասի մէջ ապրող թրջացող քաղաքացիներն ալ պետք է ընդգրկել այդ ցանկին մէջ:

## ԵՐԿՈՒ ՆԱՒ ԿԱԼՆԵՔԻ ՏԱԿ

Իրանի Յեղափոխութեան պահակները յայտարարեցին, թէ երկու նաւ առած են կալանքի տակ ապօրինի



քարիւղ մաքսանեղակելու համար: Անոնք յայտարարեցին, թէ Փանամայի եւ Թանգանիայի դրօշակները կորո նաւերը 1,5 միլիոն լիթր քարիւղ կը մաքսանեղակեն:

## ԻՐԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՆՏԵ

Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնը զգուշացուց Երոպական միութիւնը, թէ 2015 թուականին



կնքուած հիւլեական համաձայնագրի պայմանաժամի աւարտէն ետք, ամեն պատժամիջոց ապօրինի պիտի ըլլայ: Իրան զգուշացուց Երոպական երկիրները ապօրինի պատժամիջոցներու շարունակութենէն: Այս յայտարարութիւնը կատարուեցաւ, որովհետեւ Բրիտանիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարեց, թէ պատժամիջոցներու ժամանակամիջոցի աւարտէն ետք Բրիտանիա, Ֆրանսա եւ Գերմանիա պիտի շարունակեն իրենց պատժամիջոցները Իրանի դէմ:

## ԱՄՆ-Ի ՀԱՄԱՐ ԱՌԱՋԻՆԱԶԵՐԹՈՒԹԻՒՆ ԵՆ ԼԱԶԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԻ ԱՆՅԱՊԱՐ ԲԱՅՈՒՄՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

ԱՄՆ-ի համար առաջնահերթություն են ինչպես Լազինի միջանցքի վերաբացումը, այնպես ալ Հայաստանի եւ Ատրապեյճանի միջեւ վերջնական խաղաղության հաստատումը: Այս մասին յայտնած է ԱՄՆ Արտաքին գործերու նախարարության խօսնակ Մեթիու Միլլըրը:



Ուաշինգթոնի համար առաջնահերթ այս խնդիրներն են խօսած է՝ անդրադառնալով ԱՄՆ արտաքին գործերու նախարարին՝ կովկասեան բանակցություններու հարցերով աւագ խորհրդական Լուի Պոնոյի այցին Երեւան, որ տեղի ունեցած է 14 Սեպտեմբերին:

«Ան (Խմբ.՝ Լուի Պոնո) կը շարունակէ շփումները կարճաժամկետ առաջնահերթութեան, այն է՝ Լազինի միջանցքի վերաբացման, եւ, ի հարկէ, երկարաժամկետ առաջնահերթութեան, այն է՝ ընդհանուր խնդիրին վերաբերեալ խաղաղ լուծման հասնելու շուրջ, ինչ որ ես կ'անուանեմ երկարաժամկետ, բայց մենք իսկապէս կը փափաքինք, որ այդ տեղի ունենայ հնարաւորինս շուտ», ըսած է Մեթիու Միլլըր:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի բնակչութեան վիճակին՝ ԱՄՆ Արտաքին գործերու նախարարութեան խօսնակը կրկնած է Լազինի միջանցքի անյապաղ բացման կարեւորութիւնը:

«Մենք կ'ուզենք, որ Լազինի միջանցքը անյապաղ բացուի: Մենք այդ յստակ ըսած ենք: Նախարար Պլինքըն շփումներ ունեցած է ե՛լ Հայաստանի, ե՛լ Ատրապեյճանի ղեկավարներուն հետ՝ յստակացնելու, որ մենք կը փափաքինք, որ Լազինի միջանցքը անյապաղ բացուի՝ Լեռնային Ղարաբաղի մէջ իսկապէս սարսափելի մարդասիրական իրավիճակը հանգուցալուծելու համար», ըսած է Միլլըր:

## ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ԶԱՅԱՍՏԱՆ-ԱՄԷ ԳՈՐԾԱՐԱՐ ԶԱՍԱԺՈՂՈՎ

Երեւանի մէջ, 18 Սեպտեմբերին, պիտի կայանայ Հայաստան-Արաբական Միացեալ Եմիրութիւններ գործարար համաժողով:

Համաժողովը կը կազմակերպուի «Էնթերփրայզ Արմենիա» Ներդրումներու աջակցման կեդրոնի, Հայաստանի մէջ Արաբական Միացեալ Եմիրութիւններու դեսպանութեան եւ ԱՄԷ առեւտրաարդիւնաբերական պալատներու ֆետերասիոնի կողմէ:



Միջոցառման ընթացքին ելոյթ պիտի ունենան ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Զեյրոբեանը, ՀՀ-ի մէջ Արաբական Միացեալ Եմիրութիւններու դեսպան Նարիման Սոհամմատ Շարիֆ Ալ Մուլլան, «Էնթերփրայզ Արմենիա»-ի գլխաւոր տնօրէն Լեւոն Օհանեսեանը եւ ԱՄԷ պատուիրակութեան ղեկավար, ԱՄԷ առեւտրաարդիւնաբերական պալատներու ֆետերասիոնի նախագահ Ապտալա Ալմազրուի:

Համաժողովի ծիրին մէջ պիտի ստորագրուին փոխըմբռնման յուշագրեր «Էնթերփրայզ Արմենիա»-ի եւ ԱՄԷ առեւտրաարդիւնաբերական պալատներու ֆետերասիոնի միջեւ, ՀՀ առեւտրաարդիւնաբերական պալատի եւ ԱՄԷ առեւտրաարդիւնաբերական պալատներու ֆետերասիոնի միջեւ, Հայաստանի երիտասարդ կանանց ընկերակցութեան եւ ԱՄԷ գործարար կանանց խորհուրդին միջեւ:

Համաժողովի ընթացքին մասնակիցներուն պիտի ներկայացուին Հայաստանի ներդրումային գրաւչութիւնն ու առեւտրային հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ Եմիրութեան գրաւչութիւնով գործող ընկերութիւններու յաջողութեան պատմութիւնները:

Այնուհետեւ տեղի պիտի ունենան ներդրումային ուղղութեան B2B հանդիպումներ, որոնց ժամանակ հայկական ընկերութիւններու ներդրումային ծրագրերը պիտի ներկայացուին ԱՄԷ ներդրողներուն:

Տուեալ հանդիպումներուն պիտի յաջորդեն արտահանման եւ առեւտրի գծով B2B հանդիպումներ: Վերջիններս ծիրին մէջ պիտի ներկայացուին ԱՄԷ մեծ կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ հայ արտահանողներն ու ներմուծողները:

## ԱՐԱՐԱՍ Տնտեսական

### ԼԻԱՍՆԱՆ ԶԻՆԱԲՈՒՄԵՐ ԵՐԵՎՈՅԹԸ

Լիբանանի մէջ տնտեսական տագնապէն ետք ականատես կը դառնանք երբեմն մարդից, որոնք կրնան ծախսել: Եթէ պրպտենք աղբիւրը այդ կարողութեան, պիտի նկատենք, թէ այս ծախսողներուն մեծ մասը օժանդակութիւն կը ստանայ արտերկրի իր ազգականներէն կամ գաւազներ ունի արտերկրի մէջ: Երկրին տնտեսական վիճակը վերջին տարիներուն մեծ անկում արձանագրեց դրամանիշի փոխարժեքի անկումին պատճառով: Ներկայիս լիբանանցի պաշտօնէտանի ամսականը չի բաւեր իր անհրաժեշտ ծախքը կատարելու համար: Կառավարութիւնը սնանկացած ըլլալով չկրցաւ աշխատավարձի յաւելում կատարել երկրին տնտեսութիւնը հաւասարակշռելու համար: Եղածը այն է, որ ամէն ընկերութիւն ինք որոշեց իր պաշտօնէտանի աշխատավարձը հաւասարակշռել կամ պահել Նոյնը: Այսինքն, քառասուն վիճակ մը այս դրամաշաղկապէն երկրին մէջ:

### ՀԱՅԱՍՏԱՆ ՍԻԱԸ ՓՆՏՈՒՆԵՐ ՄԵՐ ՄԵՋ

Երկու շաբաթ առաջ հանդիպեցայ Հայաստանէն Նոր Եկած ընկերոջս որ բաւական յաջողած գործարար է մետաղներու ճարտարարուեստին մէջ: Ան գանգատեցաւ եւ ներկայացուց Հայաստանի մէջ ճարտարարուեստին իրական վիճակը: Ան յայտնեց, որ իրենց գործարանը մետաղէ կտորներ կը պատէ արծաթով ու այլ մետաղներով: Իւրաքանչիւր կտորի արժեքը իրենց շահով կը հասնի 12 հայկական դրամի: Երբ այս կտորը առաջարկեցին հայ վաճառականի մը, անոր պատասխանը ցնցիչ էր: Անոր մէջ կար մեր ժողովուրդի ծախողութեան հիմնական պատճառը: Մարդը իրենց յայտնեց, թէ Թուրքիայէն կը գնեն 10 հայկական դրամի: Երկու դրամի համար մերժեց Հայաստանի մէջ արտադրուածը: Այս ի՞նչ կրնանք կոչել: Ընչաքաղցողութիւն, կծծողութիւն... Արդիւնքը ցաւալի է: Այս մտածելակերպն է որ կը կործանէ ճարտարարուեստը Հայաստանի մէջ: Ե՞րբ պիտի զգաստանանք եւ հասկնանք, որ հայրենասիրութիւնը միայն լոզունգ չէ, այլ՝ սիրել է քաւելու երկրին ճարտարարուեստը, որ մերն է: Չարագացած երկիրն է որ դէմ կրնայ դնել բոլոր մարտահրաւերներուն: Երկու դրամի մասին մտածող մարդը հայրենասէր մը չէ, այլ գրպանասէր մըն է:

### ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼ ԵՒ ԱՌԻՎ ԼՈՐ ԵՐԿԱԹՈՒՂԱԳԻԾ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ

Վերջապէս երկաթուղագիծ մը պիտի բացուի Իրանի եւ Իրաքի միջեւ, երկար տարիներու սպասումէ ետք: Զաղաքական պատճառներով, երկար տարիներէ ի վեր այս ծրագիրը իրագործելու առիթներ չկային: Ներկայիս առիթը ներկայացաւ այդ ծրագիրը յաջողցնելու համար: Երկաթուղագիծը պիտի բացուի հարաւարեւմտեան Շաթ Էլ Արապ շրջանի մէջ: Այս շրջանը դաշտային է ու դիրին է երկաթուղագիծ հաստատել այդտեղ: Այս ծրագիրը լաւ առիթ պիտի տայ զարգացնելու համար առեւտուրը եւ զբօսաշրջութիւնը երկու երկիրներուն միջեւ:

Կապուի մէջ տեղի ունեցած յեղաշրջումը զինուորականներու կողմէ կարծեք շղթայի մը վերջին օղակը չէ: Անիկի մէջ Արեւմուտքին վարած քաղաքականութիւնը՝ երկիրներ շահագործելու, անհոգ իրենց ծրագիրը գործադրող ղեկավարներ պահելու, աղքատ քաղաքացիներու գոյութիւնը եւ սերունդի մը երեւիլը որ երկրորդն է անկախութենէն ի վեր ու գիտէ թէ այս կացութիւնը այսպէս չի կրնար շարունակուիլ: Այս սերունդն է որ կը կատարէ յեղաշրջումը, տեղ մը բան մը դէպի լաւ ուղղելու համար: Այս հոլովոյթը անշրջելի է: Օրերը պիտի փաստեն այդ մէկը:

### ԱՄԻ ՆՈՐ ՀՈՐԻՉՈՆՆԵՐ

Ռուսական դաշնութեան Ծայրագոյն Արեւելի շրջանը ունի չպեղծած պաշարներ եւ ներդրում մեծ առիթներ կը բանայ գործարարներու առջեւ: Վատիվութեան մէջ պիտի բացուի Արեւելեան տնտեսական համաժողովը: Հնդկաստան, Չինաստան, Մոնկոլիա, Լաոս, Միանմար եւ ԱՄԷԱՆ-ի անդամ երկիրներ պիտի մասնակցին մեծ պատուիրակութիւններով: Համաժողովին լոզունգը պիտի ըլլայ «Համագործակցութիւն, հաղաղութիւն եւ շարագացում»: Այս լոզունգը կ'արտացոլացնէ Ռուսիոյ նպատակը՝ մասնակցող երկիրներուն առիթ տալու հաստատելու երկկողմ շահի վրայ հիմնուած ներդրում տարբեր մարզերու մէջ:

Չինական «Xuanyuan Group Industrial Development» ընկերութիւնը պիտի հաստատէ ճարտարարուեստի կեդրոն մը Ծայրագոյն Արեւելի ռուսական Ամուր շրջանին մէջ: Ընկերութիւնը պիտի կատարէ 102 միլիոն ԱՄՆ տոլարի ներդրում այս կեդրոնին մէջ եւ պիտի բացուին 400 գործատեղներ: Ընկերութիւնը պիտի արտադրէ ռոպորտեր, 3D տպիչներ, անօդային թռչող սարքեր, ուժանիւթ արտադրող սարքերու կտորներ:

ԱՄՆ-ի նախագահ Ճօ Դայտընի Վիեթնամ կատարելիք այցելութիւնը ունի քանի մը նպատակ: Անուցմէ մէկն է Չինաստանի շուրջ հաստատել անկախ երկիրներու համախմբում մը՝ ճնշում բանեցնելու համար անոր վրայ: Վիեթնամ կը պատկանի այն երկիրներու ցանցին, որոնք կը զգուշանան Չինաստանի Հարաւային Չինական ծովուն մէջ կատարած քայլերէն: ԱՄՆ կ'օգտագործէ այս առիթը իր ծրագիրը յառաջ տանելու համար հարաւարեւելեան եւ արեւելեան Ասիոյ շրջանին մէջ:

### ԵՐՈՊԱ ԱՌԵՏՈՒՐ ՌՈՒՊԼԻՈՎ ԵՒ ԼԻՐԱՅՈՎ

Թուրքիոյ եւ Ռուսական դաշնութեան միջեւ առեւտուրին վճարումը սկսած է տեղի ունենալ երկիրներու դրամանիշով: 2023 տարուան առաջին եօթը ամիսներուն երկու երկիրներուն միջեւ իրենց դրամանիշով կատարուած

վճարումները աւելցած են 230 առ հարիւր համեմատութեամբ: Երկու երկիրները կը ձգտին իրենց միջեւ առաւելու ծաւալը ներկայի 61 միլիարդ ԱՄՆ տոլարէն աւելցնելու 100 միլիարդ ԱՄՆ տոլարի: Երկու երկիրներուն միջեւ առեւտուրի ամենամեծ հատուածը ուժանիւթն է:

Ըստ քաղաքական վերլուծողներու, Թուրքիոյ մէջ բնակող յոյն քաղաքացիներու թիւը նուազում արձանագրած է: Եգեական ծովու Իմպրոզ կղզիին վրայ 1960-ական թուականներուն 6 հազար յոյն կ'ապրէին: Ներկայիս այդ բնակիչները գաղթած են ու անոնց տեղ գրաւած են թուրքեր: Այս փոքր օրինակ մըն է այն քաղաքականութեան, որ վարեցին իրերայաջորդ թղթական կառավարութիւններ, սեղմում կատարելով յոյն եւ քրիստոնէայ բնակչութեան վրայ տարբեր միջոցներով: Կղզին բնակեցուցին թուրք գաղթականներով: Յոյն բնակչութեան դէմ գործադրեցին դարձ փակելու, անվայել վերաբերմունքի, մարդասպանութեան, հող բռնագրաւելու միջոցները: Նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողանի իշխանութեան հասնելէն ետք քաղաքականութիւնը մասամբ փոխուած է, յունական դպրոցը բացուած է ու նախկին յոյն բնակիչներ սկսած են վերադառնալ ու կղզիին 200 յոյն բնակչութեան թիւը սկսած է մասամբ աւելնալ:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՎԱՐԿ ՊՐԻԷՍ-Ի ԴՐԱՄԱՆԻՇ ԵՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՅՔ

ՊՐԻԷՍ-ի տնտեսական համախմբումի անդամ երկիրներ ծրագրած են հաստատել միակ դրամանիշ մը իրարու միջեւ առեւտուրի համար որպէս դրամանիշ օգտագործելու համար: Սակայն այս հաստատումին հոլովոյթը պիտի առնէ որոշ ժամանակ: Ռուսական դաշնութեան Արտաքին գործերու նախարարութեան տնտեսական համագործակցութեան բաժնի պատասխանատու Տմիթրի Պրիշչեվսկի յայտարարեց, թէ ՊՐԻԷՍ-ի դրամանիշի հաստատումը պիտի առնէ որոշ ժամանակ:



Ըստ մասնագետին, ԱՄՆ-ի վարած պատժամիջոցներու քաղաքականութիւնը արագացուց ԱՄՆ տոլարէն տարբեր ուրիշ դրամանիշ մը հաստատելու տնտեսական հզօր պետութիւններու որոշումը: Ան յոյս յայտնեց, որ երկիրներ իրենց դրամանիշով վճարում կատարելու հոլովոյթը սկըսած է արդէն: ԱՄՆ տոլարէն հետախուրու հոլովոյթը մը սկըսած է, թէեւ պիտի առնէ որոշ ժամանակ, ըստ մասնագետին:

ԱՄՆ-ի, Գանատայի եւ Արեւմտեան Եւրոպայի մէջ վերջին քսան տարիներուն անշարժ գոյքի գինը կրած է մեծ յաւելում: Այս բոլորին հետեւանքով, բնակարաններու վարձքերն ալ կրած են յաւելում: Անշարժ գոյքի գինի յաւելումին եւ պարտքի տոկոսի յաւելումին պատճառով շատ մը ընտանիքներ, որոնց եկամուտը սահմանափակ է, չեն կրնար գնել անձնական բնակարան: Վարձքերու գինի յաւելումն ալ արգելք կը դառնայ մարդոց տուն վարձելու ու այդ պատճառով կը բազմանայ վրաններու տակ բնակող մարդոց քանակը մասնաւոր ԱՄՆ-ի մէջ:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԷ ԾԿՈՒՆՈՒԹԻՒՆ

Տնտեսութեան մէջ ճկունութիւնը կ'օգտագործուի չափելու համար ապրանքի մը գինի յաւելումը այդ ապրանքի պահանջքին վրայ: Այսինքն, եթէ կաթին գինը աւելնայ 10 առ հարիւր համեմատութեամբ, պահանջարկը քանի տոտով պիտի նուազի: Առածգականութիւնը կամ ճկունութիւնը այդ համեմատութիւնն է: Կարգ մը ապրանքներ ճկուն չեն: Այսինքն պէնզինի եւ հացի գինի յաւելումի պարագային, անոնց պահանջարկը պիտի չնուազի: Կառավարութիւններ պէտք է հսկեն այս առածգականութեան հարցը եւ գինի յաւելում թոյլ տան շատ սերտուած ձեւով, երկրի տնտեսութեան հաւասարակշռութիւնը չխանգարելու համար: 2014 թուականին, Սերժ Սարգսեանի նախագահութեան ժամանակաշրջանին, Հայաստան միացաւ Եւրասիական տնտեսական միութեան եւ երկիր մըտնող ապրանքին մաքսը եռապատկուցեցաւ: Այդ տարուան ընթացքին ուր հազար ընկերութիւն փակուեցաւ Հայաստանի մէջ: Այս քայլը սերտուած չէր եւ տնտեսական սնանկացումի առիթ դարձաւ: Այս չսերտուած քայլերը պատճառներէն մէկն էին Սերժ Սարգսեանի իշխանութեան անկումին:

Վ. ԹՈՍՈՒՆԵԱՆ

# BOGHOS OPTIC

Autoroute Jdeideh,  
Tel.: 01-870016

# ՄԵՐ ԱՅՈՒՆԻՆԵՐԸ ԵՎ ԼՆՈՒՄԻՆԱԿԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թիւ 16

## «Կատակերգութիւնը փախուստ է ոչ թէ ճշմարտութենէն, այլ՝ յուսահատութենէն. ներքին փախուստ դէպի հաւատը»


Քրիսթոֆըր Ֆրայ (1907-2005), անգլիացի բանաստեղծ եւ թատերագիր

Մարդկային ընկերութիւնը հազարամեակներ է վեր հիմը դրած է մարդոց միջեւ մարդկային վերաբերմունքի զարգացումի հողովոյթին: Երկնային կրօնները ծառայած են նաեւ մարդու զարգացումին, ճիշդ կարգաւարտելու պարագային: Մարդկային ընկերութեան մէջ ծնած մարդարեւորները, լուսատու մարդիկ լոյս սփռած են իրենց չորս կողմը: Դարձած են փարոս հազարաւորներու, տարածած Բարին, Գեղեցիկը: Նաեւ ծանր տուրք վճարած են տգէտ, նիւթապաշտ խաւին, հալածուելով ու նոյնիսկ նահատակուելով այդ ճամբուն վրայ:

Երգիծանքը արձակ է թատերգութեան այն սեռն է, որ ծիծաղի միջոցով կը ներկայացնէ մարդկային կերպարներ, վատ կենցաղ ու յոռի բարքեր, զանոնք ուղղելու նպատակով: Այս սեռը կ'օգնէ մարդուն ճանչնալու ինքզինքը որպէս մաս ընկերութեան մը, իր կեանքը վարելու հաւասարակշռած, աստուածահաճոյ ձեւով: Զեռու մնալով ամէն յոռի բարքերն ու իր եղբայր մարդուն վնասող ամէն արարքը:

Յայ երգիծագիր Յակոբ Պարոնեան է ռուս թատերագիր ու արձակագիր Անթոն Չեխով հիւրերն են մեր այսօրուան «Մշակոյթի Անդրադարձ»ին: Այս ստեղծագործող մարդիկ շատ բան տուին մեզի, Աշխարհի մշակոյթին: Անոնք իրենց կեանքով եւ գործով ներկայացուցին բարոյական մարդուն արժանիքները, արձակ գրութեամբ եւ թատերգութեամբ: Անոնք աշխատեցան մարդուն ներկայացնել կենսաձեւ մը, որ հիմնուած է բարիին ու գեղեցիկին վրայ: Յակոբ Պարոնեանի պարագային ան միկնէ մահ պայքարեցաւ իր ժողովուրդի բարօրութեան եւ զարգացումին համար: Մեռաւ այդ պայքարի ճամբուն վրայ որպէս յառաջամարտիկ, գրգռող կտոր մը տխր միայն: Իսկ Չեխով 19-րդ դարուն բարձրագուց ռուս մարդուն արժէքը, այն դարուն, երբ մարդը թիւ էր միայն, ծնալ, թնդանօթի միս: Ան դրաւ առաջին քարերը այն կառոյցին, որուն վրայ ապագային հիմը դրին Մարդկային իրաւունք անունը կրող կառոյցին, որ փորձեց բարձրացնել մարդը: Բարին, սերն ու գեղեցիկը տրուած են մարդուն Արարիչին կողմէ, կարենալ վարելու համար աստուածահաճոյ կեանք, որպէս մաս Տիեզերքի դրական ուժերու փաղակազին: Բնութեան անգիր օրէնքն է որ կը գործէ, որ շատեր կը կոչեն նախախնամութիւն:

## ԱՐԵՄՏԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ (1843 - 1891)



Յակոբ Պարոնեան հայ երգիծաբան է, խմբագիր եւ գրող: Նախապէս ուսումը ստացած է ծննդավայրին՝ Պուլիսի Ադրիանապոլիս (Էտիւրնէ) թաղամասի Արշակունեաց վարժարանին մէջ: Ապրուստ հոգալու համար դեղագործի մը քով կ'աշխատի երկու տարի: Ապա կը պաշտօնավարէ ծխախոտի ընկերութեան մը մէջ իբրեւ հաշուապահ: Ինքնաշխատութեամբ եւ անյազ ընթերցումով ձեռք բերած է լայն զարգացում եւ գրական հմտութիւն:

1863-ին կ'անցնի Պուլիս եւ կը դասաւանդէ Սկիւտարի ճեմարանը, աշակերտ ունենալով Պետրոս Դուրեանը: 1871-ին կը ստանձնէ «Եփրատ»ի խմբագրապետի պաշտօնը, բայց շուտով կ'անցնի Յարութիւն Սվաճեանի հիմնած «Մեղուն» թերթի խմբագրութեան, զայն վերածելով յայտնի երգիծաթերթի: Երբ 1874-ին «Մեղուն» կը դադարի, Սվաճեան արտօնատերի իրաւունքը կը փոխանցէ Պարոնեանին, որ զայն կը վերահրատարակէ որպէս «Թատրոն»: Իբր արտօնատեր կաշկանդումէ գերծ գտնուելով, Պարոնեան թափչ կու տայ իր խորագրաւոր բայց դաստիարակիչ սրամտութեան, հեզելով շրջապատին յոռի բարքերը: Տնտեսական դժուարութիւններու պատճառաւ, «Թատրոն»ը կը դադարի 1877-ին:

1879-ին կը սկսի աշխատակցիլ Միլաս Գափամաճեանի «Լոյս» թերթին, որպէս գաւելտական բաժինի պատասխանատու: Իր գրութիւնները լայն հետաքրքրութիւն կը ստեղծեն, սակայն Գափամաճեան նիւթապետ չի վարձատրեր զինքն եւ հետեւեալ Պարոնեան կը ստիպուի «Լոյս»ի իր աշխատակցութիւնը դադարեցնել:


1884-ին «Խիկար» ամսագիրը կը սկսի, եւ հակառակ նիւթական խոչընդոտներուն ու կարճ ընդհատումներուն, զայն կը իրատարակէ մինչեւ 1888: Այս ամսագրին մէջ լոյս կը տեսնեն իր երգիծաբանական բազմաթիւ կարեւոր գործերը: 1888-էն 1890՝ ապրուստ ապահովելու համար Ղալաթիոյ Կերոնական վարժարանին մէջ տոմարակալութիւն կ'ուսուցանէ: Գոն իրեն կ'աշակերտէ յայտնի լեզուաբան Յրաջեայ Աճառեանը: Կը տառապի հիւժախտ եւ կը մահանայ 1891-ին, թշուառութեան մէջ ձգելով այրին ու անչափահաս գաւակները:

Վերոյիշեալը ամփոփ կենսագրութիւնն էր հայ ժողովուրդի ամենամեծ երգիծաբանին: Յակոբ Պարոնեան իսկական գագաթ մըն էր հայ եւ միջազգային երգիծաբանութեան մէջ: Իր բոլոր երկերը գրուածներն են այս սե-

ռին մէջ: Յակոբ Պարոնեան իր ժամանակուան յառաջամարտիկն էր: Իր ժամանակէն առաջ գագող գրիչն էր: Ան հեռուն կը տեսնէր զալիք օրերը, երբ գրողներ կաշկանդումներէ հեռու պիտի կարենային քննադատել իշխողը կամ ընկերութեան յոռի բարքերը, ընկերութիւնը աւելի լաւ տեղ հասցնելու համար: Պարոնեան վճարեց յառաջամարտիկ ըլլալու ծանր գինը: Այս այն գինն է, որ կը վճարէին բոլոր յառաջամարտիկները բոլոր ժամանակներուն: Պարոնեան վճարեց այս ծանր գինը իր ժամանակուան յոռի բարքերը ներկայացնելու համար երգիծական միջոցով: Իր տգէտ քննադատները չներեցին Պարոնեանը: «Մեծապատիւ Մուրացկանները» անոր գրութեանը օճն է: Կ'արժէ ընթերցել զայն հասկնալու համար անոր նիւթը եւ իրայատուկ ոճը:

### ՄԵԾԱՊԱՏԻ ՍՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Յագար ութը հարիւր եօթնասուն... չեմ յիշեր՝ քանիսն, Սեպտեմբերի երեսունը մէկին,- ներեցեք, երեսունին պիտի ըսէի, վասնզի Սեպտեմբերն երեսուն օր միայն ունի,- երկար է ընդարձակ թիկնոցի մը մէջ փաթարուած միջահասակ եւ գիրուկ մարդ մը, որ Տրապիզոնի շոգեհանէն նոր ելած էր, Ղալաթիոյ նաւամատուցին վրայ կայնած՝ նաւակէ մը իւր սնտուկները հանել կ'աշխատէր:



Կը տեսնեք՝ որպէս պարզութեամբ սկսայ: Պատմութիւնս հետաքրքրական ընելու ջանքով եւ անկից քանի մը հարիւր օրինակ աւելի ծախելու համար չըսի, թէ նոյն օրն սաստիկ հով մը կար, թէ տեղատարափ անձրեւ կու գար, թէ խառն բազմութիւն մը հետաքրքրութեամբ դէպի Ղալաթիոյ իրապարակը կը վազէր, թէ ոստիկանութիւնն աղջիկ մը ձերբակալած էր եւ այն խօսքեր, որովք վիպասաններն կը սկսին միշտ իրենց վեպերը: Ես ալ կրնայի ըսել այս ամէնը, բայց չըսի, որովհետեւ նոյն օրն ոչ հով կար, ոչ անձրեւ, ոչ խումն բազմութիւն եւ ոչ ձերբակալուած աղջիկ մը:

Արդ, առանց կասկածելու հաւատացեք պատմութեանս, որ ժամանակակից դեպք մ'է:

Այս ճամբորդն օժտուած էր զոյգ մը խոշոր եւ սեւ աչքերով, զոյգ մը հաստ, սեւ եւ երկար յօնքերով, զոյգ մը մեծ ակննջներով եւ զոյգ մը քիթեր... չէ՛, չէ՛, մեկ քիթով, թեպէտ եւ բայց զոյգ մը քիթերու տեղ կրնար ծառայել. անոր մեծութիւնը սխալեցուց զիս: Ուներ այնպիսի նայուածք մը, որուն եթէ Պ. Յ. Վարդովեան հանդիպէր իւր աչքերով, կը հարցունէր այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կ'ուզես՝ թատրոնիս մէջ ապուշի դեր կատարելու համար»:

Սնտուկներն եւ անկողինն, որ քուրջի մը մէջ ներփակած էին, նաւակէն հանելուն պէս ճամբորդն քաշեց քսակն ու նաւաւարին իրաւունքը վճարելով՝ բեռնակիր մը կանչեց: Գինգ բեռնակիրներ ներկայացան իրեն: Տարակոյս չկայ, որ եթէ հինգ կանչէր, քսակն եւ հինգ պիտի ունենար իւր առջեւ մայրաքաղաքի սովորութեանը համեմատ:

- Ո՞ր կողմ պիտի երթաք աղա,- հարցուց բեռնակիրներն մին՝ մեկ ոտքը սնտուկներէն միոյն վրայ կոխելով:

- Բերա, Ծաղկի փողոց, թիւ 2 պիտի երթամ,- պատասխանեց խոշոր մարդը:

- Շատ աղէկ, հասկցայ, Բերա, Ծաղկի փողոց... պատուական փողոց մ'է,- ըսաւ հարցումն ընող բեռնակիրն եւ սնտուկին մէկն ալ շալկելով սկսաւ երթալ:

- Ծաղկի փողոցն ես ալ գիտեմ,- ըսաւ երկրորդ բեռնակիրն եւ սնտուկին մէկն ալ ինք առնելուն պէս՝ Բերայի ճամբան բռնեց:

- Ես ամէն օր կ'երթամ Ծաղկի փողոցն,- ըսաւ երրորդն եւ մարդուն անկողինը գտնէն վերցնելն, կռնակին վրայ առնելն ու վազելն մէկ ըրաւ:

Այս գործողութիւններն այնքան արագութեամբ կատարուեցան, որ մարդը շուարելով սկսաւ չորս կողմը նայիլ՝ տեսնելու համար բեռնակիրներն, որ բազմութեան մէջ նայալտ եղած էին:

- Ի՞նչ խայտառակութիւն է աս,- պոռաք վերջապէս ոտները գետինը զարնելով, ո՞ր տարին անկողինս եւ սնտուկներս, ատոնք ի՞նչ իրաւունք ունին իմ անկողնուս եւ սնտուկներուս խառնուելու, ի՞նչ աներես մարդ են եղեր այս տեղաց մարդերը. ինչ որ կը տեսնեն, կ'առնեն, կը տանին:

- Ծաղկի փողոցը մենք ալ գիտենք, աղա, մեզի ալ բան մը տուր, որ տանին,- ըսին միւս երկու բեռնակիրները:

- Ծաղկի փողոցն ալ գտնենի տակն անցնի, դուք ալ,- պատասխանեց մարդն, որուն այտերն նեղութենէ կարմրի սկսած էին:

Երկու բեռնակիրները խնայով հեռացան. եւ ճամբորդն ալ իւր սնտուկներուն տեսնէն երթալ կը պատրաստուէր, երբ բարձրահասակ, թխաղէմ, փոքր աչքերով մարդ մը ուները տնկած, ձեռները շփելով եւ բռնաքօսեալ ժպիտով մը մօտեցաւ անոր եւ քաղաքավարական ձեւով մը ձեռները բռնելով հարցուց.

- Դո՞ւք եք, Աբիսողովմ աղա, ե՞րբ եկաք, ո՞ր շոգեհանով եկաք, ի՞նչպէս եք, ձեր եղբայրն ի՞նչպէս է, ազգային գործերն ի՞նչպէս են Տրապիզոն, հացին գինը քանի՞ է՝ հոն, անձրեւ եկա՞ւ այս օրերս ձեր քաղաքը... վայ, Աբիսողովմ աղա, վայ...

- Ես եմ Աբիսողովմ աղան, հիմա եկայ, տաճկի շոգեհանով եկայ, շատ աղէկ եմ, եղբայրս ալ աղէկ է, ազգային գործերն ալ աղէկ են Տրապիզոն, հացին գինը մէկ դահեկան է, անձրեւ չեկաւ այս օրերս մեր քաղաքը,- պատասխանեց փուրով թիկնոցաբանակ՝ առանց ճանաչելու այս անձն:

- Ներեցեք, թողութիւն ըրեք, որ չկրցի մինչեւ շոգեհան գալ զձեզ դիմարտելու համար: Ինծի գրուած էր Տրապիզոնն, որ այս շաբթու անպատճառ հոս պիտի գաք... - Ես ատանկ բաներու չեմ նայիր:

- Արդարեւ մայրաքաղաքս ինքզինքը բախտաւոր համարելու է ձեզի պէս պատուական ազգային մը, շնորհակ

երիտասարդ մը, ողջամիտ մեկը...

- Սնտուկներս...
- Ազգաւոր սիրտ մը, վեհանձն հոգի մը...
- Բեռնա...
- Յայրենասէր անձ մը...
- Կիրները...
- Ազգասէր, ուսեալ, կրթեալ...
- Սնտուկ...
- Դաստիարակեալ...
- Ներս առին, տարին...
- Ազնուասիրտ, ազնուախոհ, ազնուաղէմ մեկը իր մէջ ունենալու համար:

- Սնտուկներուս մէջ ատանկ բաներ չկան,- պատասխանեց Աբիսողովմ աղան քալել սկսելով՝ բեռնակիրները գտնելու համար:

- Թեպէտեւ դուք զիս չէք ճանչնար, բայց ես ձեր գերդաստանը խիստ լաւ կը ճանչնամ. ձեր լուսահոգի հայրն իմ լրագրոյս բաժանորդ էր: Շատ բարի մարդ մ'էր, աղքատներուն ողորմութիւն կու տար, աղքատ աղջիկներ կը կարգէր եւ իրեն դիմողներուն բարութիւն կ'ընէր: Ասանկ ողորմած մարդերը շատ ապրելու են, բայց, ի՞նչ օգուտ, անգութ մահը միշտ բարիները կ'առնէ եւ թող կու տայ չարներն, որ ազգին չարութիւն ընեն: Թողուք սակայն ինները եւ ուրիշ բանի վրայ խօսիք: Շոգեհանուն մէջ հանգի՛ստ էիք:

- Շատ հանգիստ էի, պատուականապէս կերայ, խմեցի եւ պանկեցայ,- պատասխանեց Աբիսողովմ աղան՝ քալելն շուտ առնել սկսելով:

- Եթէ հանգիստ չըլլայիք, վաղուան լրագրոյս մէջ պիտի գրէի եւ ընկերութեան ուշադրութիւնը պիտի հրաւիրէի,- ըսաւ խմբագիրն տեսնէն վազելով:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԹՈՆ ՉԵԽՈՎ (1860-1904)

Անթոն Փավլովիչ Չեխով, ռուս մեծ գրող եւ թատերգագիր: Անոր թատերախաղերը եւ պատմութեան գիտնականութեան միջազգային գերականութեան պատուանդանն էր: Ընդհին կեանքը միայն քառասունչորս տարի, սակայն լեցուն էր երկերով եւ նորարարութեամբ: Ան իր գործերով նոր ուղի բացաւ միջազգային թատերական գրականութեան մէջ, Զեխովի Իպսոնի եւ Օլիւսթ Սթրինստրոմի հետ:



Չեխով ծնած է հարաւային Ռուսիոյ Թականդոկ նաւահանգիստին մէջ, որ կը գտնուի Ազովի ծովուն վրայ: Ան երրորդ զաւակն էր վեց զաւակներ ունեցող համեստ ընտանիքի մը: Ինչպէս նախնիքը հարուստ էր եւ քաղաքի երգչախումբի վարիչ, նուիրեալ քրիստոնէս մը: Սակայն ան զաւակներուն հետ կը վարուէր կոշտօրէն: Մայրը վաճառականի մը աղջիկն էր, որ երիտասարդութեան պտըտած էր ամբողջ Ռուսիան ու իր զաւակներուն կը պատմէր պատմութիւններ: Չեխովի վրայ մեծ ազդեցութիւն ձգած են այդ պատմութեանը եւ ապագային եղած են նիւթը իր շատ մը պատմութեանը: Չեխով կ'ըսէր, թէ հորմէն ստրկած է ձիւրքեր, իսկ մօրմէն առած է իր ոգին: Նախնական ուսումը ստացած է քաղաքի յունական վարժարանին մէջ, ապա Թականդոկի ճիմնագիտական մէջ: Ան «տխուր» կը կոչէ իր մանկութեան տարիները:

1876 թուականին, Չեխովի հոր սնանկութիւնը իր շինած տան պատճառով, հայրը կը մղէ ընտանեօք փախչելու Մոսկուա: Անթոն մնաց Թականդոկի մէջ երեք տարի եւ իր ընտանիքի մեկնումէն ետք, անոր կալուածները վաճառելու եւ պարտքը փակելու համար: Ան վճարեց իր ուսումին ծախսը մասնաւոր դասեր տալով, ձկնորսութեամբ եւ օրաթերթերու մէջ յօդուածներ ստորագրելով: Այս ժամանակաշրջանին ան կարողաց Սերվանթես, Թիւրկենէ, Կոնչարով եւ Շոփընհաուզը: 1879 թուականին արարեց երկրորդական վարժարանը, միացաւ իր ընտանիքին Մոսկուայի մէջ, ուր ընդունուեցաւ Սեչենովի անուան բժշկական համալսարան:

Կանուխ տարիքէն Չեխով ճանչցուած էր որպէս լաւ պատմող եւ իր պատմութիւնները երգիծանքով համեմտող գրող: Ան ներկայացուց ռուս ժողովուրդի համեստ կեանքէն դուրս գալու: Իր պատմութեանը ժողովուրդի կեանքին մօտ էին եւ այդ էր պատճառը որ ան դարձաւ սիրուած գրող մը, որ ներկայացուց ժողովուրդին յոյզերը, ցաւերը: 1882 թուականէն սկսաւ գրել Նիքոլայ Լեյնիի իրատարակած «Ասքոյքի» (Կտորներ) օրաթերթին մէջ:

1884-ին արարեց բժշկական համալսարանը եւ սկսաւ աշխատիլ, սակայն քիչ էր եկամուտը այդ ասպարեզէն, որովհետեւ ձիւրքերը կը դարմանէր ժողովուրդին գաւակները: 1885-ին սկսաւ արին փոխել: Այդ ժամանակ թոքախտը անբերելի կը գործէր Ռուսիոյ մէջ: Ան յայտնեց իր ընտանիքին եղելութիւնը: Միայն Լեյնիի յայտնեց: 1886-ին հրաւիրուեցաւ գրելու այն ժամանակուան ռուսական ամենանշանաւոր օրաթերթերէն՝ Սենթ Փեթերբուրկի հրատարակուող «Նովոյէ Վրեմիա»ի (Նոր ժամանակներ)

ՊՐԻՍՏԱԿ

«Շաբ.դ տեսնել 4րդ էջ»

# ԱՄՈՒՐ ՉԿՈՒՆ

## ԵՐՈՊԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ԶԵՍՓԻՆՆԵՆ ԼԻԿԻ Ա. ՓՈՒԼԻ ՍՄԱՐՏ. ԵՆԻՎԵՆԹԻՄ ԵՒ ԱՐՍԵՆԱԼ ԴՈՒՐՍ ԱՆԱՅԻՆ

Շաբաթավերջին շարունակուեցան Երոպայի կիներու ակումբներու առաջնակարգ մրցաշարքի՝ Զեմփինըզ Լիկի գտումի առաջին փուլի մրցումները: Այս փուլի աւարտա-



կան հանգրուանին յաղթող խումբերը անցան գտումի երկրորդ փուլ: Այս հանգրուանի անակնկալներն էր Անգլիոյ «Արսենալ»-ի եւ Իտալիոյ «Եովենթիս»-ի պարտութիւնը տուգանային հարուածներով Ֆրանսայի «Փարիզ ՖՍ»-էն եւ Գերմանիոյ «Այնթրախթ Գրանքֆորթ»-էն ու դուրս մտալը խմբակներու փուլէն: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքները.

- Եովենթիս (Իտ.) - Այնթրախթ Ֆրանք. (Գեր.) 1-1 տուգ. 4-5
- Օլիմպիկա Զլուժ (Ռուս.) - Զիրիաթ Կաթ (Իսր.) 0-0 տուգ. 4-3
- Արսենալ (Անգ.) - Փարիզ ՖՍ (Ֆր.) 3-3 տուգ. 2-4
- Սփարթաթ Սուպերլիգա (Սրբ.) - ԶՈՒՍ Զուլփիօ (Ֆին.) 2-1
- Ափոլլոն Լիմասոլ (Կիպ.) - Սամերիելօ (Վրաս.) 3-0
- Այաքս Ամսթերտամ (Հոլ.) - Տիւսսու ՊժՈՒ (Պոլ.) 3-0
- Վորսլա Փոլսթադ (Ուելս.) - Օսիլեք (Խրթ.) 3-0
- Վլասկօ Սիթի (Սկոտ.) - Կիւթրա (Լիթ.) 3-0
- Սենթ Փետրըն (Աւստ.) - ՓՈՔ Սալոնիք (Յուն.) 3-0
- Չուրիխ (Չեխ.) - Պիրքիքարա (Սլո.) 3-1
- Վլադիսլա (Ալպ.) - Վալիւր Ռեյքիավիք (Իսլ.) 1-2
- ՍԼ Պենֆիլդ (Փոր.) - ՍՖԷ Ռիկա (Լաթ.) 4-0
- Լեւանթ (Սպ.) - Թվենթ Էնիքտե (Հոլ.) 2-3
- Աստրլիք (Պոլ.) - Պրան (Նոր.) 0-3
- Վալերենկա (Նոր.) - Սելթիք (Սկոտ.) 2-2 տուգ. 11-10

## ԱՅՍՕՐՈՒՄՆ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ

- ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 7-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 15:00 Փիւնիկ (1) - ԲԿՍԱ Երեւան (6)  
**ԱՆԳԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 14:30 Կուլվըր. Ուոնտըրըզ (15) - Լիվըրպոլ (3)  
 17:00 Մանչեսթըր Եուն. (11) - Պրայթըն Էստ Յով Ալպ. (6)  
 17:00 Ուեսթ Յեմ Եուն. (4) - Մանչեսթըր Սիթի (1)  
 19:30 Սիլվեստըր Եուն. (14) - Պրենթֆորտ (8)  
**ՍՊԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 15:00 Աթլետիք Պիլասո (5) - Եատիզ (6)  
 17:15 Վալենսիա (11) - Աթլետիքօ Մատրիտ (4)  
 22:00 Պարսելուս (3) - Ռեալ Պեթիս (7)  
**ԻՏԱԼԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 16:00 Եովենթիս (3) - Լազիօ Ռոմա (12)  
 19:00 Ինթեր Միլան (1) - ԱՍ Միլան (2)  
 21:45 Ճենովա (14) - Նափոլի (6)  
**ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 16:30 ՖՍ Էտլն (14) - Յոֆլնհայմ (6)  
 19:30 ՎՖԼ Պոխում (13) - Այնթրախթ Ֆրանքֆորթ (10)  
**ՖՐԱՆՍԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 18:00 ՌԷՆ (7) - Լիլ (5)  
 22:00 Լան (17) - Մեց (13)  
**ՐՈՍԱՆԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 17:30 Ֆէյենուրտ Ռոթթըր. (4) - Յերընվէն (8)  
 21:00 ՓՍՎ Այնտհովըն (2) - ՆԻՍ Նայմեյըն (13)  
**ՓՈՐՏՈՒԿԱԼԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 20:00 Ֆարենսէ (15) - Սփորթինկ Պրակա (7)  
 22:30 Վիզելա (12) - Պենֆիլդ (4)  
**ՌՈՒՄԻՆԻՈՅ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 16:30 Այմարա Կրոզլի (10) - Զրասնատար (1)  
 21:15 Պալեյրա Զալիսիկուրատ (16) - Ռոսթով (11)  
**ՊԵՆՏԻՆԱՅԻ ԱՆՈՅՏԱՆՈՒԹԵԱՆ 7-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ**  
 19:15 Ինիոն ՍԷՆ Կիլուազ (6) - Ժէլը (9)  
 21:45 Էլեպ Պրիւժ (4) - Սփորթինկ Շարլըրու (13):

**2023-2024 Առաջին Հաւաք**

Հ.Մ.Ս. Պէյրուսի Սկաուտական Խորհուրդը և Խմբապետական Կազմը ձեզ կը հրաւիրէ Հ.Մ.Ս. Պէյրուսի Սկաուտական Շարժման 2023-2024 շրջանի առաջին հաւաքին

Տեղի պիտի ունենայ Շաբաթ, 16 Սեպտեմբեր 2023-ի երեկոյեան ժամը 4:30-էն սկսեալ, Հ.Կ.Բ.Ս. Սահակեան Լեւոն Մկրտչեան Գոլէճի շրջափակէն ներս, Սին իլ Ֆիլ:

**Հրաւեր**

**ՀԱՆՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 103-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻՌՈՎ ՄԱՏԱՂԻ ԱՒՎՆԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ**

Հանոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած ամառական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 7 Յոկտեմբեր 2023-ին:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք բոլոր հայրենակիցներուն եւ բարեկամներուն, որ իրենց մատաղցու ոչխարը կամ նուիրատուութիւնները փոխանցեն Հանոյ Հայրենակցական Միութեան գրասենեակ, Սբ. Գեորգ եկեղեցւոյ խորհրդատուն եւ կամ շրջող հանգանակիչներուն:

**ՀԱՆՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿԱՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**Կեսարիոյ Բարեսիրական Ընկերակցութիւն**

2023-2024 դպրոցական տարեշրջանի նոր եւ նախկին սաներու համար արձանագրութիւնները տեղի պիտի ունենան Շաբաթ՝ Սեպտեմբեր 23, 30 եւ Յոկտեմբեր 7-ին, կէսօրէ ետք ժամը 4-էն մինչեւ ժամը 6:

**Կարեւոր:**  
 1-Դիմողները պարտին իրենց հետ ունենալ հայկական դպրոց արձանագրուած ըլլալու փաստաթուղթ մը:  
 2-Վերոյիշեալ թուականէն ետք դիմումագիրները պիտի մերժուին:

**Sahaguan College**

- Clear and shared focus
- Supportive learning environment
- Frequent monitoring of learning and teaching
- Individual growth and academic success

**2023-2024 Tuitions**

Grades 8 & 9 → 200 \$

Grades 10 & 11 → 250 \$

Grade 12 → 300 \$

**Grade 7 FREE**

+961 3 280 743 | Sahaguan-Levon Meguerditchian College | Sin el Fil

## ՄՇԱԿԱՆՔԹԻ ԸՆԴՐԱԴԱՐՃ

մէջ: Մեծահարուստ Ալեքսանտր Սուվորինն էր օրաթերթին տերը եւ ան դարձաւ Չեխովի ամենամեծ բարեկամը: Անոր կը վճարէր բաւական լաւ գումար իր հրապարակած յօդուածներուն եւ գրութիւններուն համար:

Օրուան մեծ գրողներէն Տիտիլի Կրիկորովիչ, կարողաւ ետք Չեխովի «Որսորդը» պատմուածքը, նամակ գրեց անոր՝ յայտնելով իր գնահատանքը այդ գլուխգործոցին համար: Ան իրատեղ գրողին գրել աւելի քիչ եւ կեդրոնանալ որակին վրայ: Սակայն ի վերուստ Չեխով կը զգար թէ պէտք է արտադրէ: Այդպէս են հսկաները: Կարծէք գաղտնի թելերով կապուած են ճակատագիրին հետ եւ գիտեն, թէ մօտ է իրենց հեռանալը այս անցողիկ կեանքին: Այս էր պատճառը, որ Չեխով քանի մը տարուան մէջ արտադրեց երկար կեանքի մը արտադրութիւնը չափ:

1887 թուականին, թատրոնի տնօրէն մը Չեխովէն պահանջեց գրել թատրերգութիւն մը: Արդիւնքը՝ «Իվանով»-ը, որ գրեց երկու շաբթուան մէջ: Թէեւ գրողը չհաւանցաւ իր գրածը, սակայն ան ունեցաւ մեծ յաջողութիւն: Այս թատրերգութեան յաջողոցին ուրիշ թատերախաղեր: «The Seagull»(1895), «Uncle Vanya» (1897), «The Three Sisters» (1900), եւ «The Cherry Orchard» (1903) մեծ համբաւ ապահովեցին գրողին համար եւ ան դարձաւ այն երեք թատրերգակներէն մէկը, որոնք նոր ուղի բացին թատրերգութեան արուեստին մէջ: Այս դպրոցը իրապաշտ դպրոցն էր, ուր դէպքերը կը ներկայացուէին իրենց ճիշդ պատահած ձեւով, մեծ ազդեցութիւն ձգելով հանդիսատեսին վրայ: Անթոն Չեխով ըսած է թատրերգութեան մէջ իրապաշտութիւնը պահելու համար. «Հեռացուցէ ամէն բան, որ կապ չունի պատմութեան հետ: Եթէ առաջին գլուխին մէջ կ'ըսէք, որ պատմել կախուած է հրացան, ապա երկրորդ կամ երրորդ գլուխին մէջ ան անպայման պէտք է գործածուի: Եթէ ան պիտի չգործածուի, պէտք չէ կախուած ըլլալ պատմելու»:

Ստորեւ ներկայացնել «Uncle Vanya»-ն մատր, Չեխովի երգիծական ուրոյն ոճը գնահատելու համար:  
 «Զսանհինգ տարի պարգուցեցաւ, որ ան պարզապէս տեղ կը գրաւէր»:  
 «Աշխարհը կ'աւարտի ոչ թէ պատերազմի կամ աղետներու, այլ՝ ատելութեան պատճառով»:  
 «Երբ իրական կեանք չունիս, պէտք է ապրիս քու երազներով»:  
 «Եթէ պիտակ չեն գտներ, կ'ըսեն՝ տարօրինակ մարդ է, շատ տարօրինակ»:  
 «Ան ոչնչացուցած է գրեթէ ամէն ինչ եւ ոչինչ ստեղծած է, որ գրաւէ անոր տեղը»:

**Հ.Կ.Բ.Ս. ԴԵՐՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ**

01/560704  
71/356035

**ՀԿԲՍԻ դարմանատունը արդէն պատրաստ է ձեզ ընդունելու ԺԱՍԱԴՐՈՒԹԵԱՄԲ:**

Այսու կը ներկայացնենք ՀԿԲՍ-ի նոր Հանոյ դարմանատան մասնագետ բժիշկներու անուանացանկը եւ ժամանակացոյցը:

|                                  |   |                        |
|----------------------------------|---|------------------------|
| <b>Բժշ. Աքրամ Չղեյպ -</b>        | Ակնաբոյժ  | (Երեքշաբթի)            |
| <b>Բժշ. Իրինա Արբաճեան-</b>      | Ծննդաբերութեան եւ կանանց հիւանդութիւններու մասնագետ | (Երեքշաբթի)            |
| <b>Բժշ. Ռաֆֆի Ժիլակոբեան -</b>   | Զիթ, կոկորդ եւ ականջի մասնագետ                      | (Չորեքշաբթի)           |
| <b>Բժշ. Յարութ Տեմիրճեան -</b>   | Ոսկրաբոյժ   | (Չորեքշաբթի)           |
| <b>Բժշ. Ռաֆֆի Փօլատեան -</b>     | Գեղձային հիւանդութիւններու մասնագետ                 | (Երեքշաբթի)            |
| <b>Բժշ. Յարութ Այնթապեան -</b>   | Ընդհանուր բժիշկ                                     | (Չորեքշաբթի)           |
| <b>Սարին Չափուբեան -</b>         | Սննդաբան  | (Ուրբաթ)               |
| <b>Բժշ. Ժամալ Հատատ -</b>        | Ատամաբոյժ   | (Երկուշաբթի եւ Ուրբաթ) |
| <b>Բժշ. Միսակ Ալեքսանեան -</b>   | Սրտաբան   | (Ուրբաթ)               |
| <b>Բժշ. Ծովինար Ալեքսանեան -</b> | Մաշկաբան  | (Ուրբաթ)               |
| <b>Բժշ. Վարուժ Մարկոսեան -</b>   | Մանկաբոյժ   | (Երկուշաբթի)           |
| <b>Բժշ. Միսակ Արբաճեան -</b>     | Կիրաբոյժ  | (Հինգշաբթի)            |

Դարմանատունը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 3:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք, թէ դեղարանը բաց է նաեւ նոյն ժամերուն:

**ARARAD DAILY NEWSPAPER**

MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael Beirut | Lebanon | www.araraddaily.com email: araradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية | المديرية المسؤولة: أني صرافيان  
تصدر عن شركة مسيسير للمباعة والنشر (ش.م.م.)